

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱԿԱԿՆԵՐԻ  
ՄԱՐՏԻԿԱՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ԳԵՆԵՐԱԼ  
ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ

ՍԱՐԻ ԳԻՏՈՒԹՅ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ



9(47) "XIX"

4981

7-35

Директория, дн.

Архипелаг - Египетский

И.З. Син - Наклонный: 1м.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9(42)16

Դ-35

Վ. ՊԱՐՍԱՄՑԱՆ

ԱՅՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ

Ա. Հ. ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՈՎ

A 6739 4981

ԱՍՏՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱ  
Ե Ր Ե Վ Ա Կ

1942

Սերիա՝ խմբագրությամբ ակադ. ՀՈՎԱԵՓ ՕՐԲԵԼԻՈՒ

Շապիկը՝ նկարիչ Մ. Ն. ՄՈԽԻ





գեներալ Արշակ Տեր-Ղուկասովը (Տեր-Ղուկասյան) մեր ռազմական անցյալի փայլուն ներկայացուցիչներից մեկն է :

Նա ծնվել է Թիֆլիս քաղաքում 1819 թվականին : Նրա հայրը ծխական քահանա էր և մտադիր էր Արշակին նույնպես քահանա դարձնել : Հոր այդ մտադրությանը դեմ է դուրս դալիս Արշակի մեծ եղբայրը՝ Սողոմոնը և ոլատանի Արշակի բախտի տնօրինությունն իր ձեռքը վերցնելով, նրան տանում է Պետերբուրգ և 1835 թվականին լնդունել տալիս Հաղորդակցության Ճանապարհների ինստիտուտը :

Նոր միջավայրը նոր աղդեցություն է գործում երիտասարդ Տեր-Ղուկասովի վրա : Հայրենի երկրի ու ժողովրդի հերոսական անցյալի մասին ձեռք բերած իր գիտելիքները նա հարստացնում է ուսումնական ժողովրդի կուլտուրական նվաճումներով, ծանոթանում է երոպական կուլտուրային :

Ինստիտուտում Տեր-Ղուկասովն անմիջապես աչքի է ընկնում իր ընդունակություններով։ Զարմանալի արագությամբ նա տիրապետում է ոռուսաց լեզվին, կատարելագործվում է Փրանսերենի մեջ և արտակարդ ընդունակություններ է դրսեորում մասնագիտական առարկաների գծով։ 1839 թվականին Տեր-Ղուկասովը փայլուն առաջադիմությամբ ավարտում է ինստիտուտը և աշխատանքի անցնում Պետերբուրգի շըրջակայքի ճանապարհների առաջին դիրքեկցիայում։ 1842 թ. մայիսից նա տեղափոխվում է Կովկաս։ Ռւթ տարի շարունակ, որպես ինժեներ, նա աշխատում է Ռազմավերական ճանապարհի շինարարության վրա։ Այստեղ ևս ամենուրեք նա աչքի է ընկնում և արժանանում մի շարք պարզուների ու շքանշանների։ Այսքանով էլ հենց վերջանում է նրա քաղաքացիական ծառայությունը։

Դեպի ռազմական գործն ունեցած սերը Տեր-Ղուկասովին չուտով նետում է ռազմական ասպարեզ։ 1850 թ. նա մտնում է զինվորական ծառայության։ 1852 թ. մարտին գործուղվում է Ալզերոնյան գումզը և նշանակվում Յ-րդ գումարտակի հրամանատար։

Իր առաջին սաղմական մկրտությունը  
Տեր-Ղուկասովն ստանում է Ապշերոնյան  
գնդում։ Այդ գնդի մարտական գործողու-  
թյունների հետ են կապված նրա, որպես  
զորավարի, առաջին քայլերը։ Ապշերոն-  
յան գնդի հետ Տեր-Ղուկասովը մասնակ-  
ցում է լեռնականների դեմ մղվող պատե-  
րազմներին և շատ շուտով աչքի է ընկնում  
իր քաջությամբ ու դորավարական կարո-  
ղությամբ։ Զանցած մի քանի տարի, մենք  
նրան տեսնում ենք նույն գնդի հրամանա-  
տարի պաշտոնում։ Որպես հմուտ և քաջ  
դորավար՝ Տեր-Ղուկասովն առանձնապես  
հայտնի է դառնում լեռների արծիվ, հըս-  
չակավոր Շամիլի Գունիբ առվի զրավ-  
ման ժամանակ։ Իր մի խումբ քաջերի հետ  
Տեր-Ղուկասովն առաջինն է լինում, որ  
անանցանելի կածաններով ու ժայռերով  
բարձրանում է Գունիբ։ Նրա հմայքն արա-  
գությամբ տարածվում է կովկասյան զոր-  
քերի ու լեռնականների մեջ։

1850—1860-ական թվականները Տեր-  
Ղուկասովը մեծ մասամբ անց է կացնում  
արշավանքներում։ Նրա սաղմական օպերա-  
ցիաներն ամենուրեք վերջանում են հաղ-  
թանակներով։ Կովկասյան պատերազմների  
պատմությանը հայտնի չեն մի դեպք, որ

Տեր-Ղուկասովը պարտություն կրած լինի: Այդ պատերազմներում էլ հենց նոր դրսեորում է տաղանդավոր զորավարի անվիճելի, հատկություններ, հանդես է դալիս որպես ոռուս մեծ ժողովրդի լավագույն ռազմական տրադիցիաների դործադրող և Սուվորովյան հաղթելու արվեստի վարպետ: Կովկասյան պատերազմները նրա լայն կուրծքը զարդարում են «Քաջության համար» և մի շարք այլ չքանչաններով: Գունիքի գրավման համար Տեր-Ղուկասովը ստանում է Գեորգյան IV աստիճանի շքանշան:

Տեր-Ղուկասովի, որպես տաղանդավոր ու քաջ զորավարի, մեծությունը, սակայն, ավելի ամբողջական, ավելի լրիվ երևան է դալիս 1877—1878 թ. թ. ոռութուրքական պատերազմի տարիներին:

1877 թ. ապրիլի 12-ին սկսվում է ոռութուրքական պատերազմը: Ռուսական զորքերի հրամանատարությունը, ինչպես Բալկանյան, նույնպես էլ Կովկասյան ճակատի համար մշակել էր հարձակողական գործողությունների պլան: Այդ պլանի համաձայն՝ Կովկասյան ճակատում համառակողին հարված պետք է հասցվեր երեք ուղղությամբ՝ Ալեքսանդրովից, Իզմի-

րից և Ախալցխայից : Գվաավոր հարվածը  
հասցվելու էր կենտրոնից՝ Ալեքսանդրո-  
սլու—կարս ուղղությամբ, որի պատասխա-  
նատվությունը դրված էր Կովկասյան կոր-  
պուսի հրամանատար գեներալ-ադյուտանտ  
Լոռիս-Մելիքովի վրա : Աջ և ձախ թևերում  
Լոռիս-Մելիքովի հրամանատարությամբ  
պետք է դորձեին Ախալցխայի ու Երևանի  
ջոկատները :

Երևանյան ջոկատին գալիք մարտերում  
նախատեսված էր վերին աստիճանի պա-  
տասխանատու և ծանր դործ : Պատերազմն  
սկսելուց նա ոչ միայն պետք է Երևանի  
նահանգն ապահովեր թուրք-քրդական  
հնարավոր անկարգություններից ու ներ-  
խուժումներից, այլև հարձակվեր Բայա-  
զետ-Ալաշկերտ ուղղությամբ, ձախ թևից  
հարվածեր Մուխտար փաշայի բանակին :  
Երևանյան ջոկատի դործողություններին  
անպայմանորեն որոշիչ դեր էր վերապահ-  
ված ամբողջ ճակատի համար և պատա-  
հական չէ, որ այդ չափազանց պատասխա-  
նատու խնդրի կատարումը դրվում էր գե-  
ներալ Տեր-Ղուկասովի վրա : Ռուսական  
բանակում գեներալ Տեր-Ղուկասովն ար-  
դեն իսկ աչքի ընկնող դեմք էր : Նա անցել  
էր կովկասյան դաժան պատերազմների բո-

վով և իր սազմական փառքը ձեռք բերել  
կովի դաշտում։ Տեր-Ղուկասովը Սուվորո-  
վի և Կուտուզովի շկոլայի գորավար էր։  
Իր զինվորների և սպաների աչքում նա  
պաշտելի մարդ էր։

Ահա նրա այս արժանիքները հաշվի  
առնելով էր, որ դլխավոր հրամանատա-  
րությունը նրան տալիս էր Երևանյան ջո-  
կատի հրամանատարի պատասխանատու  
պաշտոնը։ Տեր-Ղուկասովի մասին դվա-  
վոր շտաբի տված կարծիքի մեջ նա ան-  
փանվում է «հուսալի և պայծառ անձնավո-  
րություն»։

Գեներալ Տեր-Ղուկասովին Երևանյան  
ջոկատի հրամանատար նշանակելիս՝ դլխա-  
վոր հրամանատարությունը հաշվի էր առ-  
նում նաև այն, որ նա ոռւսական բանա-  
կում եղած հայ գեներալներից ամենամաս-  
սայական ու ամենահամակրելի զորավարն  
էր հայերի մեջ։

Նշանակվելով Երևանյան ջոկատի հրա-  
մանատար, պատերազմի նախօրեին Տեր-  
Ղուկասովը դալիս է Հայուստան և ձեռնա-  
մուխ լինում լուրջ նախագարաստական  
աշխատանքի։ Ինչպես հատուկ է մեծ զո-  
րավարին, առանց անհրաժեշտ նախապատ-  
րաստության նա չէր անում և ոչ մի քայլ։

Եվ որովհետեւ նախքան իր առաջ դրված  
ռազմական-տակտիկական ինդրի լուծմանն  
անցնելը, նա անպայմանորեն անհրաժեշտ  
չափով նախապատրաստվում էր, ուստի  
ինդրի լուծմանն անցնելիս՝ գործում էր  
ամենամեծ վճռականությամբ։ Նա վճռա-  
կան գործողությունների կողմնակից զորա-  
վար էր և, որպես այդպիսին, հանդես է  
դավիս ոչ միայն իր հարձակումների ժա-  
մանակ, ուրոնց նա նախապատվություն էր  
տալիս, այլև իր հոչակավոր նահանջի օրե-  
րին։

Եվ այսպես. դասավորելով իր տրամա-  
դրության տակ Երևանում, էջմիածնում և  
Իգդիրում եղած զորամասերը և հայերից  
ու Անդրկովկասի մյուս ժողովուրդներից  
կազմված աշխարհագորային հեծյալ խըմ-  
բերը, կամ, ինչպես իր ժամանակին զրանց  
անվանել են՝ «միլիցիան», կարգի գցելով  
ճանապարհներն ու կամուրջները, 1877 թ.  
ապրիլի 15-ին Տեր-Ղուկասովը, Երևանյան  
ջոկատի գլուխ անցած, արշավում է Բա-  
յազետի վրա։ Բայազետի գավառի կառա-  
վարիչ Ալի-Քեմալ փաշան լսելով Տեր-  
Ղուկասովի հարձակման լուրը, իր գորքերի  
հետ փախուստի է դիմում։ Տեր-Ղուկասովն  
առանց կովի մտնում է Բայազետ։ Բնա-

կիչներն աղ ու հացով են դիմավորում  
նրան և խնդրում են չկոտորել իրենց : Դի-  
մելով բնակիչներին, Տեր-Ղուկասովն ա-  
սում է . «Ռուական գորքերը կուլում են  
միմիայն զինված քշնամու դեմ, իսկ ան-  
պաշտպաններին նրանք հովանավորում են» :

Բայազետում թողնելով փոքրաթիվ զո-  
րաբաժին, ապրիլի 24-ին Տեր-Ղուկասովն  
արշավում է Դիաղինի վրա : Պահաջակի ու  
արագորեն դարձացնելով իր վճռական  
հարձակողական գործողությունները, Տեր-  
Ղուկասովը փոքրաթիվ զորքով մեկը  
մյուսի հետեւից գրավում է Դիաղինը, Հա-  
րաքիլիսան, Ալաշկերտը և Զեյդեկանը :  
Նրա այս հաղթանակներին մեծապես նպաս-  
տում էին տեղացի հայերը, որոնք ամենու-  
րեք բաց էին անում իրենց զոհերը ուստի  
զորքերի առաջ, օդնում, ուղեկցում էին  
նրանց, ստույգ տեղեկություններ հաղոր-  
դում հակառակորդի մասին և այլն : Տեր-  
Ղուկասովին նրանք համարում էին իրենց  
ազատաբարը, և այդպես էլ էր : Նրա գրա-  
ված վայրերում հայերը շունչ էին քաշում  
թուրք փաշաների և քուրդ բեղերի անօրի-  
նակ հարստահարություններից ու ճնշում-  
ներից :

Տեր-Ղուկասովի հետագա ոազմական

դործողություններն էլ ավելի են նշանավորում նրա անունը։ Այս տեսակիտից առանձնապես հիշատակության արժանի են նրա երկու մեծ ճակատամարտերը՝ Դրամ-դաղում և Դհարում։

Դրամ-դաղի ճակատամարտը տեղի է ունենում 1877 թ. Հունիսի 4-ին։ Թուրքական զորքերն ապրիլից մինչև Հունիս անընդհատ նահանջելով՝ հունիսի սկզբներին համարում են Դրամ-դաղի լեռները։ Այսուղ նպաստավոր դերքերը բռնելով՝ նրանք վըճռում են կանգնեցնել հակառակորդին։ Թուրքական զորքերի հրամանատար Մահմեդ փաշան մեծ հույսեր էր կտավում տեղանքի հետ։ Նրա զորքերը բռնել էին Դրամ-դաղի բոլոր բարձունքները, որոնք, ըստ նրա, անառիկ ու անմատչելի էին հակառակորդի համար։ Հրանոթների կրակը փակում էր ոռոսական զորքերի հնարավոր անցուցին։ Քանակով էլ Մահմեդ փաշայի զորքերը մոտ երեք անգամ շատ էին Տեր-Ղուկասովի զորքերից։ Տեր-Ղուկասովին հայտնի էր այս ամենը, քայլ այնուամենայնիվ նա չհրաժարվեց թշնամու վրա գրահելու մտքից։ Իր հավատարիմ ու քաջ զինվորների հետ նա շատ անգամ էր հաղթահարել նման դժվարություններ։ Նո-

դիտեր, որ ոչ տեղանքը և ոչ էլ բորքի  
թվական գերակշռությունը չէ, որ վճռում  
են մարտի բախտը։ Մարտի բախտը վըն-  
ուղը, ասում էր նա, կովող կողմերի մար-  
տունակությունն է։ Եվ որովհետեւ նա  
լիովին վստահ էր իր զինվորների ու հրա-  
մանատարների մարտունակության վրա,  
ուստի նման դեպքեցում երբեք չէր վարա-  
նում իր զորաբաժինը մարտի տանելու և  
առավել ևս չէր կասկածում մարտը շահե-  
լու մասին։ Բայց սա խնդրի մի կողմն էր։  
Բանն այն էր, որ ինչպես հրամանատարը  
վստահ էր իր մարտիկների վրա, այնպես  
էլ վերջիններս լիակատար վստահություն  
էին տածում դեպի իրենց հրամանատարը։  
Նրանցից յուրաքանչյուրն զգում էր սիրելի  
հրամանատարի հոգատար վերաբերմունքն  
իր նկատմամբ։ Նրանք համոզված էին, որ  
նա հավասարակշռված զորավար է և երբեք  
պատահական որոշումներով ոխակի չի են-  
թարկի իր զինվորների կյանքը։ Հրամանա-  
տարի որոշումը նրանց համար որբազան  
օրենք էր և այն պետք է կատարվեր ինչ էլ  
որ լիներ։

Դրամ-դադի ճակատամարտից առաջ  
Տեր-Ղուկասովն իր մոտ է կանչում բոլոր  
սպաներին։ Նրանք արդեն դիտեին, թե

ինչի՝ մասին է լինելու հրամանատարի խոսքը։ Խնդիրը դժվարին է, բայց լուծելի իրեն հատուկ հանդստությամբ ասում է Տեր-Ղուկասովը և անցնում գործնական աշխատանքի։ Հունիսի 4-ի լուսաբացին սկսում են որոտալ ոռւսական հրանոթները։ Ոչ մի բան թերեւս այնքան սարսափելի չէք թուրքական զորքերի համար, ինչքան ոռւսական հրետանին։ Իսկ Տեր-Ղուկասովի ձեռքում ոռւսական հրետանին ավելի մարտական էր դառնում։ Հրետանացին նախապատրաստությունից հետո Երեվանյան ջոկատը հարձակում է գործում թշնամու աջ և ձախ թերերի վրա։ Կովի թունդ ժամանակ Տեր-Ղուկասովն իր հրանոթների մի մասը քողարկված կերպով ավելի առաջ է տանում և բոլորովին մոտիկ տարածությունից տեղատարափ կրակ բաց անում թշնամու դիրքերի վրա։ Երբ արդեն ամեն ինչ պատրաստ էր դրոհի համար, լսվում է ոռւսական հուժկու «ոռւսա»-ն։ Այլևս ամեն ինչ վերջացած էր։ Թուրքական զինվորներին մնում էր միայն փախչելով փրկել իրենց կյանքը ոռւս զինվորների ովինից և հեծյալ կաղակների որերից։ Թուրքական զորքերի թերերի վրա կատարած հաջող դրոհին հետևում է կենարոնի

Հարվածը : Վեց ժամ շարունակվող կատաղի մարտերում ընկնում է Մահմեդ փաշան : Կորցնելով իրենց հրամանատարին, թուրքական զորքերն ամբողջ ճակատով նահանջում են : Հետապնդելով փախչող թւշնամուն, Տեր-Ղուկասովն առաջ է շարժվում և գրավում Դհար գյուղը :

Դրամ-դաղի ճակատամարտը վերջացած էր : Երեք անգամ փոքրաթիվ ուժերով Տեր-Ղուկասովը տարել էր փայլուն հաղթանակ : Բայց նա սովորականի պես հանդիստ էր և զուսպ : Մի բառ անգամ չառելով իր մասին, Դրամ-դաղի փառահեղ մարտերի համար Տեր-Ղուկասովը շնորհակալություն է հայտնում իր զինվորներին : Իսկ երբ մոտենում է Ստավրոպոլյան գնդի զինվորներին, որոնք մարտերում ավելի քան աչքի էին ընկել, նու հանում է իր գլխարկը և գլուխ խոնարհելով նրանց առաջ, առում է . «Ստավրոպոլցինե՛ր, ուրիշ շնորհակալություն ես չունեմ» :

Դհարում նպաստավոր դիրքելու բոնելով՝ Տեր-Ղուկասովն իր ջոկատին հանգիստ է տալիս, այս անգամ թուրքական բանակի գլխավոր հրամանատար Մուխտար փաշայի զորագաժնի վրա հարձակվելու համար : Մա այնպիսի մի հարված էր լի-

նելու, որ ողետք է ջլատեր Մուխտար փաշայի ուժերը և հնարավորություն տարկենտրոնից, կաբսի ուղղությամբ հարձակվող զորամասերին առաջ շարժվելու։ Այդպես էլ լինում է։ Երբ Մուխտար փաշան լուր է տոանում, որ Տեր-Ղուկասովը հասել է Դհար, անմիջապես մեծ թվով զորք է կենտրոնացնում Դալլի-Բաբայում՝ նրա վրա հարձակվելու, նրան ջախջախելու համար։

Տեր-Ղուկասովն իմանալով Մուխտար փաշայի մտադրությունը, պատրաստվում է ընդունելու անհավասար մարտը։

Հունիսի 9-ին չորս անգամ ավելի զորքով Մուխտար փաշան գրահում է Տեր-Ղուկասովի ջոկատի վրա։ Առավոտից մինչեւ ուշ երեկո շարունակվում են կատաղի մարտերը։ Երեանյան ջոկատի մարտիկները մեկը մյոււսի հետեւից հետ են շպրտում հակառակորդի գրոհները՝ նրա համար մեծ կորուստներով։ Մարտի ժամանակ Տեր-Ղուկասովը, իր սպավորության համաձայն, լինում էր առաջավոր գծերում և այն էլ ամենավտանգավոր հատվածներում։ Անձնական օրինակով նա ոգեշնչում էր իր սպաներին ու զինվորներին։ Առյուծ էին կտրում նրա մարտիկները, երբ նույնիսկ ամենածանր, կրիտիկական մոմենտին ոն-

ըսպասելի կերպով երեսում էր իրենց սիրելի  
հրամանատարը։ Այդ պահին էլեկտրական  
հոսանքի պես նրանց միջով անցնում էր մի  
բան միայն— հաղթել— և նրանք հաղթում  
էին։ Պատերազմների պատմության մեջ  
քիչ զորավարներ են եղել, որ երկար տա-  
րիներ կռիվներ վարեն և սլաքառություն  
տեսած չլինեն։ Այդ քչերի թվին է պատ-  
կանում գեներալ Տեր-Ղուկասովը։

Դհարի ճակատամարտն ավելի կառաղի  
է լինում, քան Դրամ-դաղինը։ Թուրքական  
զորքերն իրենց անվանի զորավար Մուխ-  
տար փաշայի ղլիսավորությամբ ավելի քան  
10 ժամ համառորեն ճղուում էին ընկճել  
Տեր-Ղուկասովի փոքրաթիվ ջոկատի հերո-  
սական դիմադրությունը։ Բայց իզուր՝  
Հունիսի 10-ին Մուխտար փաշան խնդրում  
է թույլ տալ մարտի դաշտից հավաքելու  
սպանվածներին ու վերավորներին։ Տեր-  
Ղուկասովը համաձայնում է։

Այդ օրը կռիվներ չեն լինում։ Մուխ-  
տար փաշան սպասում էր օժանդակ զորքե-  
րի գալուն։ Բայց դրա փոխարեն նրան  
լուր են բերում, թե ոուսական զորքերը  
կարսի կողմից արագ թափով առաջ են  
շարժվում դեպի Սողանլուղ։ Մուխտար  
փաշան թողնում է Դհարի ճակատամարտը

շարունակելու մտադրությունը և շտապում  
է օգնության հստանել Դելի-Բաբայում եղած  
իր գորքերին:

Այսպիսով, ինչպես Դրամ-դաղի, այն-  
պես էլ Դհարի ճակատամարտը վերջանում  
է Տեր-Ղուկասովի հաղթությամբ: Այդ  
երկու ճակատամարտերն ամենայն իրա-  
վամբ կարելի է համարել Տեր-Ղուկասովի  
ուազմական դարձր արվեստի և հմուտ զո-  
րավարության անլինացնելի ապացույցներ:

Տեր-Ղուկասովի, որպես զորավարի  
մեծությունն ավելի վառ կերպով արտա-  
հայտվել է նրա նշանավոր նահանջի ժա-  
մանակ:

1877թ. հունիսի 8-ին Լոռիս-Մելի-  
քովի սկսած հարձակումը, ինչպես հայտնի  
է, հաջողություն չի ունենում: Մոռխտար  
փաշան ամրանալով Զիվինի անառիկ ամ-  
րություններում, ոչ միայն հաջողությամբ  
հետ է մղում Կարսի զորաբաժնի հարձա-  
կումը, այլև առանձին հատվածներում նե-  
ղում է հակառակորդին և ստիպում նա-  
հանջել: Այս հարձակման ժամանակ ա-  
ռանձնապես մեծ են լինում գեներալ Գեյ-  
մանի զորաբաժնի կորուստները, որին  
խնդիր էր տրված միանալ Տեր-Ղուկասովի  
ջոկատին և միացյալ ուժերով հարձակվել

A 6239

4081

Մուխտար փաշայի վլա : Գևերալ Գերյամա-  
նի անհաջողությունները և Լոռիս-Մելիքո-  
վի նահանջը ծանր դրություն են ստեղծում  
Տեր-Ղուկասովի ջոկատի համար :

Հունիսի 15-ին Տեր-Ղուկասովը դժվա-  
գոր հրամանատարությունից կարդաղու-  
թյուն է ստանում նահանջելու :

Անսովոր էր նրա համար նահանջ ասած  
բանը : Նա միշտ հարձակողական մարտեր  
էր մղել և հայտնի էր որպես հարձակողա-  
կան մարտերի վարպետ : Այս անգամ էլ  
նրա մտքով բնակչ չէր անցել նահանջելը և  
նա միանգամայն անպատճառ էր դրա հա-  
մար : Սակայն, երբ գլխավոր ուժերն ար-  
դեն իսկ բոնել էին նահանջի ճանապարհը,  
Դհարում — թիկունքից հեռացած, հիմնա-  
կան զորամասերից կտրված, թշնամական  
միջարվայրում մի ավելորդ ժամ մնալն իսկ  
խիստ կորստաբեր կարող էր լինել : Ան-  
հըրաժեշտ էր շուտափույթ նահանջել՝  
թշնամու շրջապատումից ազատվելու . հա-  
մար : Ահա, այդ բացառիկ դժվարին ու  
պատասխանատու խնդիրը նույնպես Տեր-  
Ղուկասովը կատարում է փայլուն հաջո-  
ղությամբ :

Տեր-Ղուկասովին հրամայված էր  
շտամ կերպով իր ջոկատը միայն դուրս

բերել թշնամու շրջապատումից : Ինքնին  
արդեն դա չառ ծանր գործ էր : Հեռավոր  
Դհարից մինչև ոռւսական սահմանը նա  
պետք է պաշտպանվեր թշնամու հետա-  
պնդումից և կրծքով ճանապարհ բաց աներ  
թշնամու օղակումներին հանդիպելիս : Բայց  
զորաբաժնի նահանջի հետ նրա առաջ  
կանգնեց մի նոր ու ավելի դժվարին խնդիր  
ևս : Ալաշկերտի հովտի տասնյակ հազարա-  
վոր հայեր հենց որ խմացան Տեր-Ղուկասո-  
վի նահանջի մասին, մեկ մարդու պես ոտ-  
քի կանգնեցին նրա հետ ոռւսական սահ-  
մանն անցնելու համար : Շատ էր բարդա-  
նում խնդիրը : Եվ իրոք, հեշտ չէր մի  
փոքր զորաբաժնով հազարավոր անդեն  
մարդկանց, այդ թվում կանանց, երեխա-  
ների, ծերերի ապահով զուրս բերել թշ-  
նամու շրջապատումից : Բայց երբ նա մտա-  
ծում էր, թե ի՞նչ էր կատարվելու նրանց  
հետ իր հեռանալուց հետո, նրա հոգին  
վրդովվում էր, ուղեղը ցնցվում, մարմինը  
փշաքաղվում :

Ամբողջ գիշերը Տեր-Ղուկասովի աչքե-  
րին քուն չէր գալիս : Նա իր տարերքի մեջ  
էր : Մէրթ իր վրանում խորասուզված մը-  
տածում էր, խորհրդակցում յուրայինների  
հետ, հրամաններ արձակում, մերթ շրջում

էր զինվորների մեջ, ստուգում իր հրա-  
մանների կատարումը, օդնում նրանց և  
այլն։ Զոկատը մթության մեջ աննկատե-  
լիորեն, լուս ու մունջ պատրաստվում էր  
նահանջի։ Իսկ հայ բնակիչների ներկայա-  
ցուցիչները դեռևս սպասում էին գեներալի  
պատասխանին։

Տեր-Ղուկասովը չէր մոռացել նրանց։  
Նրա սրտին շատ մոտ ու ականջին հարա-  
զատ էին հնչում հայ բնակիչների ձայները։  
Ինչպես իր յուրաքանչյուր զինվորի, նույն-  
պես էլ հայ բնակիչների, նրանց կանանց  
ու երեխաների կյանքը շատ թանգ էր նրա  
համար։ Տեր-Ղուկասովը՝ հրանոթի մոտ,  
շինելի մեջ փաթաթված, փարթամորեն ա-  
ճած խոտերի վրա պառկած՝ իր մի քանի  
սպանների հետ այժմ արդեն խորհրդակցում  
էր հայերի գաղթը թույլ տալու և կազմա-  
կերպելու մասին։ Երբ նա վերջացրեց իր  
խոսքը, նրա սպաններից մեկը մտերմական  
տոնով հարցրեց գեներալին, թե այդյո՞ք  
իրենք կկարողանան այդքան մեծ թվով  
անդեն մարդկանց իրենց հետ վերցնել,  
արդյո՞ք դա չէր նշանակի ոիսկի ենթարկել  
զոկատի և հայ բնակիչների կյանքը։ Գենե-  
րալը լուս լսում էր, և երբ գնդապետը  
բալը լուս լսում էր, և երբ գնդապետը

բայց կտրուկ, պատասխանեց .— Իսկ չէ՞  
որ անպաշտպան հայ բնակիչներին թողնելն  
ավելի մեծ ոիսկ կլիներ, և մենք հավերժ  
դատապարտված կմնայինք, եթե նույնիսկ  
հաջողվեր այստեղից կենդանի պրծնել: Ո՛չ,  
ես իմ զինվորների ու սպաների պատիվն  
արատավորել չեմ կարող: Զէ՞ որ նրանք  
էլ մարդիկ են և ապրել են ուզում: Կապ-  
րենք, թո՛ղ մեզ հետ ապրեն, կմեռնենք,  
թո՛ղ մեզ հետ մեռնեն:

Ընդհանուրի լությունը համաձայնու-  
թյան նշան էր:

Սկսվում է Տեր-Ղուկասովի ջոկատի  
նշանավոր նահանջը, որին ամեն կողմից  
դալիս միանում էին հայ բնակիչները՝ ի-  
րենց բարձած սայլերով, կանանցով ու ե-  
րեխաներով: Դա գաղթ չէր, այլ փախուստ  
մահվան ճանկերից:

Մուխտար փաշան իմանալով Տեր-Ղու-  
կասովի նահանջի մասին, Իսմայիլ փաշայի  
հրամանատարությամբ մի մեծ զորաբաժին  
(մոտ 17,000 մարդ) է ուղարկում նրան  
հետապնդելու և ջախջախելու համար:  
Թայիր փաշայի զորքերը (մոտ 10,000 հո-  
գի) և ճանապարհին վիստացող քրդական  
հրոսակախմբերն էլ մյուս կողմից էին  
սպառնում Երևանյան ջոկատին ու հաղա-

բավոր անդեն հայ բնակիչներին : Բայց  
Տեր-Ղուկասովը բոլորովին չի կորցնում  
իրեն : Ակտիվ պաշտպանության անցնելով՝  
նա խափանում է թշնամու բոլոր պլաննե-  
րը : Ինչպես 1812 թ. Հայրենական պատե-  
րազմում ոռւսական բանակը, այնպես էլ  
Տեր-Ղուկասովի ջոկատը նահանջելիս այ-  
րում ու ոչնչացնում է ամեն ինչ, թշնա-  
մուն թողնելով ավերակներ ու մոխրակույ-  
տեր : Նահանջի ճանապարհին հաճախ պա-  
տահում էր, որ Տեր-Ղուկասովը պաշտպա-  
նությունից անցնում էր հարձակման, երբ  
անհրաժեշտ էր լինում փակված ճանապար-  
հը բաց անել և կամ ստրատեգիական նշա-  
նակություն ունեցող որևէ կետ գրավել :  
Նրա սպաներն ու զինվորներն այնպիսի ե-  
ռանդով էին կատարում նման օպերացիա-  
ները, որ կարծես նոր էին մարտի մեջ  
մտնում և ոչ թե երկարատեղ ծանր մարտե-  
րից հետո նահանջում : Նահանջող բանակի  
նման չէր Տեր-Ղուկասովի ջոկատը : Նրա  
նահանջն էլ սովորական նահանջ չէր, այլ  
մի խոշոր հաղթանակ, որին կարող են նա-  
խանձել շատ ու շատ նշանավոր զորավար-  
ներ :

Ութ օր է տեսում Երևանյան ջոկատի  
այս էպոսին : Ականատեսների վկայու-

թյամի՝ 8 օր շաբունակ դիչեր-ցերեկ Տեր-  
Ղուկասովը ոտքի վրա էր։ Նա էր սպանե-  
րին ու զինվորներին, հայ գաղթականներին  
հանգիստ էր տալիս, քնեցնում էր, իսկ ին-  
քը քուն ու դադար չուներ։ Առհասարակ  
նա քիչ էր քնում՝ օրական 3 կամ 4 ժամ  
և ո՛չ ավելի։ Լինում էր ամեն տեղ. զրու-  
ցում էր ամենքի հետ։ Հաճախ այցելում  
էր հիվանդ ու վիրավոր զինվորներին, իր  
սննդի աղքատիկ պաշարից նրանց բաժին  
հանում և այլն։ Նա ժամանակ էր դանում  
նույնիսկ այցելելու գաղթող հայ ընտա-  
նիքներին և զրուցելու նրանց հետ։ Եվ  
այսպես՝ կատարելով հերոսական նահան-  
ջը, Տեր-Ղուկասովն առանց կորսոր իր  
ջոկատը (այդ թվում 600 հիվանդներ ու  
վիրավորներ) 2000 հայ ընտանիքների հետ  
հասցնում է ուռւսական սահմանը։

Թագմական գործի մի շարք մասնա-  
կետներ Տեր-Ղուկասովի այս նահանջը հա-  
մարում են հազվագեղ մի երկույթ և ան-  
փիճելի ուազմական տաղանդի արդյունք։

Ականատեսներից մեկն այս նահանջի  
մասին պատմում է. «Նահանջը տեղի էր  
ունենում միանդամայն օրինակելի և բա-  
ցառիկ կարգապահությամբ։ Լիսակատար  
իսպաղություն և հանգստություն, պետե-

րէ ու զորքի ինքնարդութում, յուրաքանչյուր  
ձեռնարկում իր ժամանակին և նրա կերա-  
ւումը իր տեղին՝ կազմում էր այդ նույն  
օպերացիայի բնորոշ առանձնահատկու-  
թյունը... Դժվարին օպերացիան փայլուն  
կերպով իրագործվեց, և Երևանյան ջոկա-  
տը իր խմաստուն առաջնորդի ու նրա ար-  
ժանավոր օդնականների հետ դուրս բերվեց  
կրիտիկական դրությունից»:

Տեր-Ղուկասովի նահանջը մտավ ուուս-  
թուրքական պատերազմի պատմության  
մեջ իբրև նրա հերոսական դրվագներից  
մեկը, իսկ Արարտյան դաշտում բնակու-  
թյուն հաստատած ալաշկերտցի հայերն ի-  
րենց երգերում անմահացրին մեծ զորավա-  
րի փառապանծ անունը:

1877—1878 թ. թ. ոուս-թուրքական  
պատերազմում գեներալ Տեր-Ղուկասովի  
տարած փայլուն հաղթանակներից մեկն էլ  
Բայազետի ազատումն էր:

Բայազետը դրավելուց հետո, Տեր-  
Ղուկասովն այնտեղ թողեց մի փոքրիկ կա-  
յազոր և առաջ շարժվելով դեպի Թյուրքիա-  
յի խորքերը՝ կտրվեց նրանից: Այդ դրու-  
թյունն օգտագործեց հակառակորդը և մեծ  
ուժեր կենտրոնացնելով՝ 1877 թ. հունիսի  
6-ին պաշարեց Բայազետը:

Բայազետում եղած փոքրաթիվ բերդապահ գորամասի և հայերի համար ստեղծվեց օրհասական դրություն։ Փառքով մեռնելը գերադասելով անփառունակ կյանքից, մի բուռն պաշարվածները փակվում են Բայազետի միջնաբերդում և հերոսաբար մարտնչում թշնամու դեմ։ Բայազետի կայազորի հերոսամարտերը դառնում են ոուս-թուրքական պատերազմի ամենաուշադրավ, և փառահեղ դրվագներից մեկը։ Հայնշանավոր գրող Ռաֆֆին «Խենթի» մեջ աննման վարպետությամբ անմահացրել է այդ դրվագները։

«Բայազետը պաշարված էր։

Թուրք, քուրդ, բոշա, ջուլո և ավելի քան քսան հազար խառնիճաղանձ բաշիբուրեկներ, խառն տաճկաց կանոնավոր զորքի հետ շրջապատել էին կիսավեր քաղաքը։ Նա ծխում էր կրակի մեջ, որպես մի բնդարձակ խարույկի տարածություն։

Բերդը չորեք կողմից սեղմված էր, կարծես, մի երկաթի օղակի մեջ, որը հետզհետե նեղանալով, կամենում էր միանդամից խեղդել և մահացնել հուսաքեկ պատշարվածներին։ Հարաբերությունները դժոխ հետ բոլորովին կտրված էր... Եվ ամեն կողմից կրակը մաղվում էր այդ կետի

վրա, և ամեն կողմից թնդանոթների ոռւմ-  
քերը և հրազենների գնդակները կարկախ  
նման թափվում էին այնտեղ։ Բերդը  
մռնչում էր, որպես մի վիթխարի գաղօնի,  
որին ամեն կողմից հարվածում էրն ։ Նո-  
վճռել էր մեռնել, բայց փառքով մեռնել»։

Բայազետի մի բուռն քաջնը բերդա-  
պահ մայոր Ֆեոդոր էղվարդովիչ Շտոկ-  
վիչի գլխավորությամբ գիշեր-թերեկ ան-  
ընդհատ անհավասար կոխվ մղելով թշնա-  
մու տասնապատիկ գերազանց ուժերի դեմ,  
սպառում են իրենց գրեթե բոլոր պաշտր-  
ները։ Մնալով առանց փամփուշտի, առանց  
հացի ու ջրի, բայց հաստատակամ՝ թշնա-  
մուն գերի չհանձնվելու իրենց հերոսական  
վճռի մեջ, նրանք հույսները դնում են մի-  
այն իրենց պահծալի դրավարի՝ Տեր-Ղու-  
կասովի վրա։ Նրանք մի քանի անդամ  
փորձում են թշնամու օղակի միջով կազ-  
վել Տեր-Ղուկասովի հետ, նրան իրազեկ  
դարձնել իրենց օրհասական վիճակի մա-  
սին, բայց այդ չի հաջողվում։ Նամակա-  
տարներն ընկնում են թշնամու ձեռքը և  
անհետ կորչում։ Վերջապես, խիդախներից  
ու հնարագետներից մեկին՝ Սամսոն Տեր-  
Պողոսյանին («Խենթի» մեջ գլխավոր հե-

բոս Վարդանը) Հաջողվում է լուր տահել  
Տեր-Ղուկասովին:

Ալաշկերտում, իր նահանջի առաջին  
օրը, ծայրահեղորեն լարված ու մտազբազ  
Տեր-Ղուկասովին ստանում է Շտոկվիչի  
կարճ, բայց ազգու նամակը: Այդ ժոմենոր  
«Խենթի» մեջ Ռաֆֆին հետեւալ կերպ է  
նկարագրում. —

«Վրանի մեջ նստած էր միջահասակ մի  
զինվորական, լիքը կազմվածքով և առյու-  
ծի խրոխտ դեմքով. դա ինքը Տեր-Ղուկա-  
սովն էր: Նա ալեսոր գլուխը թեքած ուներ  
գրասեղանի վրա, ուր ածած էին շատ նա-  
մակներ, որ նոր էին բացված: Նա կրկին  
վեր առեց նրանցից մեկը, հարգում էր և  
անդադար ծխում էր: Նրա անհանդիստ  
դեմքը արտահայտում էր ներքին խոռվու-  
թյուն և խորին ցալակցություն»:

Տեր-Ղուկասովը հարց ու փորձ է ա-  
նում նամակարերին: Ականատեսից նո-  
մանրամասնություններ է լսում պաշար-  
վածների կոչմարային վիճակի մասին:  
Երբ Վարդանը հայտնում է, որ պաշար-  
վածների օրվա պարենը մի վոքք կտոր  
ձիու միս է և մի հացի զգալ ջուր, խոռվ-  
վում է Տեր-Ղուկասովի հողին, ալեկոծ-  
վում է նրա սիրտը: Հեռավոր Ալաշկերտի

Հսկում անսահմանոցին Տանը է տղղում  
Տեր-Ղուկասովի վրա Բայազետի պաշար-  
վածների օրհասական վիճակը։ Նա շտա-  
պում է որքան կարելի ։ շուտ օդնության  
հասնել նրանց։

Հաջողությամբ ավարտելով իր պատ-  
մական նահանջը, ավելի քան 20,000 հայ  
գաղթականներին և իր հիմանդ ու վիրա-  
վոր զինվորներին անցկացնելով ռուսական  
սահմանը, Տեր-Ղուկասովն Իգդիրից ռազ-  
մամթերք ու պարեն վերցնելով՝ հռւնիսի  
26-ին շարժվում է դեպի Բայազետ։

Նրա ջոկատը երկարատև մարտերից ու  
ծանր նահանջից հետո սաստիկ հոգնել էր։  
Այժմ էլ առանց հանգստի նա նորից գնում  
էր մարտի։ Հրամանառարին շատ դժվար  
էր թվում այդ։ Մի ուրիշ դեպքում հաղիպ  
թե նա իր մարտիկներին տեղից շարժեր  
առանց հանգիստ տալու, բայց քանի որ  
Բայազետի պաշարվածների համար բոպեն  
անգամ նշանակություն ուներ, ուստի նա  
աշխատում էր վայրկյան առաջ հասնել  
Բայազետ և փրկել պաշարվածներին։

— «Եղբայրնե՛ր, — ասում է նա իր մար-  
տիկներին, — մերոնց սպամահ են անում,  
մերոնք տանջվում են և մերում Բայազե-  
տում։ Ես այլևս չեմ ուզում ապրել, ինչու

ուզում եմ մեռնել։ Գնաճիք նրանց հետ  
մեռնելու»։

Պետք էր տեսնել, զբում է ականատե-  
սը, թե ինչպես հրամանատարի այս խոս-  
քերից աղջված զինվորները «ուռա՛» զոռա-  
ցին և սրերը հանած նետվեցին դեպի Բա-  
յազետ։

Հունիսի 28-ի լուսաբացին սկսվում է  
Բայազետի ոմբակոծությունը։ Տիրապետող  
Դիրքերից վարպետորեն կազմակերպված  
ոմբակոծության պաշտպանությամբ Տեր-  
Ղուկասովն իր կորիծների հետ գրոհում է  
հակառակորդի դիրքերի վրա։ Թշնամին  
կատաղի դիմադրություն է ցույց տալիս։  
Տեր-Ղուկասովի մի բուռն քաջերը 8 ժամ  
շարունակ համառ կոխմներ են մղում թուր-  
քական 13 հաղարանոց կորպուսի և բազ-  
մաթիվ բաշիբոզուկների դեմ։ Օրվա ըն-  
թացքում մի գրոհին հաջորդում էր մյոււ-  
սը։ Որու զինվորներից շատերի սվինները  
ծովում են, հրացանների խզակոթերը  
ջարդվում։ Թուրքական կորպուսը գլխո-  
վին ջախջախվում է և ցրիվ տրվում։ Տեր-  
Ղուկասովն իր կորիծների հետ մտնում է  
Բայազետ և 23 օրվա գերությունից փըր-  
կում բերդապահ հերոսների կյանքը։ Եր-  
կու կողմից բարձրացող հուժկու «ուռա»-

ների տակ զինվորներն ու սպաներն սկսում  
են համբուրզվել և ձեռքերի վրա վեր  
բարձրացնել իրենց պանծալի զորավարին :  
Բայսպետի ազատագրության համար Տեր-  
Ղուկասովն ստանում է Գեորգյան III աստի-  
ճանի շքանշան :

Բայսպետի ազատագրումը գեներալ  
Տեր-Ղուկասովի վերջին հաղթանակը չէր :  
Դրանից հետո էլ նա մի շաբաթ հաղթանակ-  
ներ է տանում ոռուս-թուրքական և այլ  
պատերազմներում : Սակայն այդ հաղթա-  
նակներից և ոչ մեկը չի կարելի համեմա-  
տել ոչ Դրամ-դաղի ու Դհարի երեկի ճա-  
կատամարտերի մուչ էլ նրա պատմական  
նահանջի ու Բայսպետի արատագրության  
հետ : Դրանք Տեր-Ղուկասովի ռազմական  
փառքի թագն ու պմակն են կազմում և նը-  
րա անունը միանդամ ընդմիշտ կապում  
Ռուսաստանի ռազմական պատմության  
հետ, որպես այդ պատմությանը հայտնի  
մեծ զորավարներից մեկը :

Լինելով երեելի զորավար, Տեր-Ղուկա-  
սովը միաժամանակ աչքի էր ընկնում իր  
արտասովոր համեստությամբ : Առհասա-  
րակ նա չէր սիրում, երբ խոսում էին իրեն  
քաջագործությունների մասին, իսկ երբ  
բարեկամների շրջանում այդ մասին խոսք

էր լինում, նա ասում էր. «Հրամանատար լինելով այնպիսի զինվորների ու սպաների, որոնցով լիքն է ոռւսական բանակը, դըմ-վար չէ քաջ զորավարի անուն վաստակել»:

Մեր երկրի վրա կախված ներկա ահեղ վտանգի օրերին, հայ ժողովուրդը, հավատարիմ իր ուազմական մեծ տրադիցիաներին, Տեր-Ղուկասովի և իր մյուս երեսի զորավարների օրինակով, եղբայրական ժողովուրդների հետ միասին, մարտնչում է և կմարտնչի իր հայրենիքի ու իր ազատության համար, դերմանա-Փաշիստական ավագակային իմպերիալիզմի վերջնական ջախջախման համար :

Армянский филиал Академии наук СССР

Боевые подвиги сынов Армении  
В. ПАРСАМЯН

Генерал-лейтенант  
А. А. ТЕР-ГУКАСОВ  
(На армянском яз.)  
Изд. Армфан  
Ереван, 1942

Վ.Յ. 0136, պատվեր 834, տիրած 4000  
1,5 տպ. մամուլ, մամուլում 19200 տպանի:  
Ստորագրված է տպելու 14 դեկտեմբերի 1942 թ.  

---

ՀԱՍՏ ԺՈՂՈՎՐԴՈՒՄ ԿԻց ՔԵՐՔԵՐԻ և ամսագրե-  
րի տպարան, Երևան:


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0042061

[154]

ԳԻՒԾ 1 Ռ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ